894. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը եղել է եկեղեցու մուտքի մոտ.
Յովհաննէսի մորն Նուրացիանին:

Հրատ. Բարխուդարեանց, 266։

92. ԱԶԱՏ—ՍՈՒԼՈՒԿ ԳՅՈՒՂ

Գյուղը վերջին տասնամյակներում մոտ 2 կմ տեղափոխվել է դեպի արևելք։ Հին վայրում մնացել է ճեղքված քարերով շինված և չորս սյուների վրա հաստատված թաղակապ եկեղեցին՝ քայքայված վիճակում։ Այդ շենքը, հավանաբար, XVII դարի է, բայց պատերի մեջ գտագործել են ավելի հին գերեզմանաքարեր և խաչքարեր, որոնցից միայն մեկի վրա կան արձանագրության մնացորդներ։

Հին գյուղատեղից վերև, դեպի արևմուտք, անտառի մեջ եղել է Սուլուկի կամ Երմոդեա քահանայի վանք կոչված մատուռը, որն այժմ հիմնովին ավերված է և քարերը տարված։

Հիշատակված արձանագրություններից տեղում ոչինչ չի մնացել. բոլորն առնում ենք հին հրատարակություններից։

895. ՍՈՒԼՈՒԿԻ ՎԱՆՔ ՄԱՏՈՒՌԻ մուտքի կամարակալ քարի վրա.
Թիւն :ՉԻԸ: (1279). Ես Մխիթար ու Տիրածէր շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տէր Ըստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի։

Հրատ. Բարխուդարեանց, 270։ Լալաեան, V, 317։

896. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ, մուտքից վեր.
Ապաղայ Ելչ խանին ու Խարայնախին Աւառս լեռով շինեցի զեկեղեցիս։
Ծանոթ. Անշուշտ սխալներով է վերծանված.

Հրատ. Բարխուդարեանց, 270։ Լալաեան, 318։

897. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄԵՋ, տապանաքարի վրա.
Այս է հանգիստ Սայի որդի Հասանայ փեսային:

Հրատ. Բարխուդարեանց, 270։

898. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄԵՋ, խաչքարի վրա.
Թվ. :ՈԻԳ։ Էր (1174)։

Հրատ. Բարխուդարեանց, 270։

899. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄՈՏ, տապանաքարի վրա.
Այս է հանգիստ Միսայէլայ. Սասնի որդի, որ կարդէ՝ յաղաւթս յիշեցէ. թվ. :Զ: (1251):

Հրատ. Բարխուդարեանց, 270։

900. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄՈՏ, խաչքարի վրա.
Կամաւն աստուծոյ կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութիւն Մալսուկին և ծնողաց իւրոց և եղբարց իւրոց Արքուշին, Խաչին, Շահմէլիք խաթունին. թվ. :ՊՂԶ: (1447)։

Հրատ. Բարխուդարեանց, 270։

901. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ հյուսիսային կողմում.
Այս է հանգիստ Ջևանայ, որդի Հասանայ. ի թվ. :ՉԿԴ: (1315):

Հրատ. Բարխուդարեանց, 270։

902. ՍՈՒԼՈՒԿ գյուղատեղի եկեղեցու շինարարական արձանագրությունը.

Շնորհով ամենակալին, ես Մէլիքէմ գամաւս շինեցի եկեղեցիս յիշատակ ինձ և նախնեացս իմոց պարոն Աղային, մէլիք Եսկարին, մէլիք Աղապէկին, Ղամար Սուլթանին և իւր ծնողին՝ մէլիք Պաղուն, Աւար խաթունին, կողակցին Սավոյինային, և եղբօրն՝ Պաso պէկին, Աղասի պէկին. թվ. :Ռ · · · ։

Հրատ. Բարխուդարեանց, 270։

93. ԳՅՈՒԼԻՍՏԱՆ ԳՅՈՒՂ

Գյուղում և շրջակայքում համեմատաբար հին հուշարձանները հետևյալներն են.

Ա. Ս. Մինաս մատուռ, գյուղի եզրին. շինված է եղել սրբատաշ քարերով. մնում են հիմնապատերը։

Բ. Մելիքական *ապարանք գյուղամիջում։*

Գ. Ամենափրկիչ *վանք. գտնվում է գյուղից հավավ-արևմուտք, ձորակի մեջ, բակում եղել են սենյակներ։*

Դ. Մատուռ. *գտնվում է վանքի մոտ. կիսավեր է.*

903. Ս. ՄԻՆԱՍԻ հյուսիսային պատի վրա եղել է՝

Կամաւն Ասուծոյ շինեցինք խորանս տանուտէրն Ուլուխան, աշխատողք երկու տէր Դաւիթն, Սպարապետն, պտղն, առ հասարակ ժողովուրդքն. թվ. :ՌՃԸ։ (1659):

Հրատ. Բարխուդարեանց, 241։

904. ՄԵԼԻՔԱԿԱՆ ապարանքի մուտքի կամար բարավորի վրա.

Շնորհիւն Այ. շինեցաւ ապարանս ի թվին :Ռ: Եւ :ՄԼԱ: (1782). Ես Ցակոբոս ծառայ Այ. իշխող գեղոյս, որդի Ապրահամ Սպարապետին։

Ծանոթ. *Առնում ենք Լալայանից։ Բարխադարյանի մոտ թիվն է :ՌՄԱ:*

Հրատ. Բարխուդարեանց, 241։ Լալաեան, V, 331։

905. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ վանքի մկրտության ավազանի մոտ.

:ՌԼ: թվ. (1641)

Հրատ. Բարխուդարեանց, 242։ Լալաեան, V, 348։

906. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ վանքի բակում մի սենյակի մուտքի վրա.

Թվ. :ՌՃԿԴ: (1715). յիշատակ է այս օթաղս Եղիա վարդապետին։

Հրատ. Բարխուդարեանց, 242։ Լալաեան, V, 348։

907. ՄԱՏՈՒՌԻ պատին ագուցված մի խաչքարի վրա.

Խաչս Հիւրիա ապաշխարողին:

Հրատ. Բարխուդարեանց, 242։ Լալաեան, V, 348։

908. ՄԱՏՈՒՌԻ մուտքի առաջ մի գերեզմանաքարի վրա.

Այս է հանգիստ Հիւրեղ տային. աղաչեցէք. թվ. :ՌԿԲ: (1613):

Հրատ. Բարխուդարեանց, 242։ Լալաեան, V, 348։

909. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, որը գտնվում է Ինջա գետի տափին «Կարմիր եղցի» *կոչված կիսավեր եկեղեցու մոտ.*